

**ՀՀ ֆինանսների նախարարություն**

**Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ 26/1**

**30 հունիսի 2015 թ.**

Քննարկվեց «Կոնվերս Բանկ» ՓԲԸ 15.05.2015 թ-ի թիվ 19-1368 դիմում-գանգատը ՀՀ ՖՆ օպերատիվ հետախուզության վարչության 29.04.2015 թ-ի թիվ 1010293 ակտի դեմ:

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 07.04.2014 թ-ի թիվ 1010293 հանձնարարագրի համաձայն «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ում (այսուհետ նաև ընկերություն) կատարվել է բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող ՀՀ օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ստուգում: Արդյունքում կազմվել է ՀՀ ՖՆ օպերատիվ հետախուզության վարչության 29.04.2015 թ-ի թիվ 1010293 ակտը (այսուհետ նաև Ակտ), որով լրացուցիչ գանձման է առաջադրվել ընդամենը 449.802.510 դրամ:

Ակտով արձանագրված խախտումների և դրանց վերաբերյալ ընկերության գանգատում բերված փաստարկների հանգամանալից և բազմակողմանի քննության արդյունքում Հանձնաժողովը եկել է եզրակացության, որ Ակտը ենթակա է վերանայման, ինչը, ըստ էության, հնարավոր է միայն ընկերությունում վերստուգում կատարելու միջոցով:

Խոսքը վերաբերվում է մասնավորապես Ակտով ապահովագրավճարները շահութահարկով հարկման առումով ծախս համարվելուն, դրանց մասով եկամտային հարկի գծով առաջադրված պարտավորություններին, ինչպես նաև բանկի սեփականությանը անցած՝ գրավադրված անշարժ գույքի մասով եկամտահարկի և եկամտային հարկի գծով առաջադրված պարտավորություններին:

Հարկ է նշել նաև, որ «Կոնվերս Բանկ» ՓԲԸ գործադիր տնօրենի ՀՀ ֆինանսների նախարարին հասցեագրված 30.06.2015 թ-ի թիվ 1-1840 գրությամբ ներկայացվել է միջնորդություն՝ ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի դրույթներով «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ում վերստուգում իրականացնելու վերաբերյալ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի ը) կետի, 11-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթներով Հանձնաժողովը եզրակացնում է, որ անհրաժեշտ է ՀՀ ֆինանսների նախարարին ներկայացնել միջնորդություն՝ «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ում վերստուգում իրականացնելու վերաբերյալ:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

**ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝**

Միջնորդություն ներկայացնել ՀՀ ֆինանսների նախարարի «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ում բյուջեի հետ փոխհարաբերությունների ճշտության վերստուգում կատարելու համար:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարանում:

**Հանձնաժողովի նախագահ՝**



**Վ. ԱՄԻՐՅԱՆ**